

2 ðî 2 øÆÛ î Ûî ° ê²î 2 Û î 2 ä° ðÆ Ð²Ø²Èè²ð²Û

î ð° ,Æî 2 ÛÆÛ Ð²Ø²î 2 ð¶àî àòèàòØÛ² èàòÃÛ²Û àòØ° òàòÛò

´ 2î 2È²î ðÆ î ðÃ²î 2 Û î ð²¶ðàî  
ëáí áñáÕ áöë³ ÝáÕÝ»ñÇ Ñ³ Û³ ñ

ՀԻՅՆ ԿԱՆՈՒՆԱԿՈՒՄ	
ՔՁԵ Ի. ԿՐԵԴԻՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՎ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՅՈՒՅՑ	3
1. Կրեդիտային համակարգի հիմնադրությունները	4
2. Ուսանողի ուսումնական բեռնվածությունը և բակալավրի ծրագրի աշխատաձևայլը	5
3. Դասընթացները և կրթական մոդուլները	5
4. Բակալավրի կրթական ծրագիրը և ավարտական պահանջները	5
4.1. Ուսումնական ծրագիրը	5
4.1.1. Ընդհանուր հումանիտար և սոցիալ – տնտեսագիտական կրթամաս	7
4.1.2. Ընդհանուր մաթեմատիկական և բնագիտական կրթամաս	8
4.1.3. Ընդհանուր մասնագիտական կրթամաս	9
4.1.4. Հատուկ մասնագիտական կրթամաս	14
4.1.5. Կրթական այլ մոդուլներ	17
4.2. Ավարտական պահանջները	17
4.2. 1. Ընդհանուր ավարտական պահանջներ	17
4.2.2. Մասնագիտական ավարտական պահանջներ	18
5. Գիտելիքների ստուգման և գնահատման համակարգը	18
5.1. Համակարգի հիմնադրությունները	18
5.2. Գնահատման մեթոդաբանությունը	19
5.3. Կիրարկման ընթացակարգը	22
5.4. Գնահատման սանդղակը և նշագրումը	22
6. Ուսանողի ակադեմիական տեղեկագիրը	23
7. Ուսման առաջադիմությունը	24
8. Դասընթացի վերահանձնումը և կրկնումը	25
9. Ծրագրի եզրափակիչ ատեստավորումը	26
10. Կրեդիտների փոխանցումը	27
11. Ուսումնական խորհրդատուների ծառայությունը	27
12. ՀԻՅՆ ԿԱՆՈՒՆԱԿՈՒՄ Ի ԿՐԵԴԻՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՎ	28
13. ՀԻՅՆ ԿԱՆՈՒՆԱԿՈՒՄ Ի ԿՐԵԴԻՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՎ	29
14. ՀԻՅՆ ԿԱՆՈՒՆԱԿՈՒՄ Ի ԿՐԵԴԻՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՎ	30

**Մաս 1. ԿՐԵԴԻՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՎ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ**

## **1. Կրեդիտային համակարգի հիմնադրույթները**

**Կրեդիտային համակարգը** ուսումնական գործընթացի կազմակերպման, ակադեմիական կրեդիտների միջոցով ուսումնառության արդյունքների հաշվառման /արժեվորման/, կուտակման և փոխանցման համակարգ է, որտեղ համապատասխան որակավորումը շնորհվում է կրթական ծրագրով սահմանված կրեդիտների անհրաժեշտ բովանդակության և քանակի ձեռքբերումից հետո:

**Կրեդիտների փոխանցման և կուտակման ECTS համակարգը** միասնական համաեվրոպական կրեդիտային համակարգ է, որտեղ ուսանողի լրիվ ուսումնական բեռնվածքը 1 ուստարում գնահատվում է 60 ECTS կրեդիտ: Այն նախատեսված է Եվրոպայում բարձրագույն կրթական տարածքում ուսանողների ձեռքբերած կրթական արդյունքների չափման, պաշտոնական ճանաչման և բուհից բուհ փոխանցումը դյուրացնելու համար:

### **ECTS կրեդիտի կարևորագույն հատկանիշներն են.**

- կիսամյակը, ուսումնական տարին կամ ուսումնառության լրիվ ծրագիրը հաջողությամբ ավարտելու համար ուսանողը պետք է վաստակի կրթական ծրագրով սահմանված կրեդիտների անհրաժեշտ քանակը,

- կրեդիտներ հատկացվում են կրթական շրջագրի գնահատման ենթակա բոլոր բաղկացուցիչներին՝ դասընթացներին, կրթական մոդուլներին, պրակտիկաներին, կուրսային և ավարտական աշխատանքներին և այլն,

- կրթական ծրագիրը և դրա առանձին բաղկացուցիչները բնութագրող բոլոր պայմանները՝ ծրագրի նպատակը և ավարտական պահանջները, դասընթացների համառոտագրերը և հատկացված կրեդիտները, դասավանդման և գնահատման մեթոդները և այլն, հրապարակվում են վաղօրոք /տպագրվում և/կամ տեղադրվում են ԱՏԿՀ կայքէջում/:

**ECTS կրեդիտը** դասընթացը ավարտելու և դրա ելքային կրթական արդյունքները ձեռք բերելու համար ուսանողից պահանջվող ժամաքանակով արտահայտված ուսումնական բեռնվածքի չափման պայմանական միավորն է, որը տրվում է ուսանողին նախանշված կրթական արդյունքների դրական գնահատումից հետո:

### **ECTS կրեդիտի կարևորագույն հատկանիշներն են.**

- ECTS կրեդիտով սահմանվող ուսումնական բեռնվածքը ներառում է ուսանողի լսարանային, արտալսարանային և ինքնուրույն իրականացվող բոլոր տեսակի ուսումնական աշխատանքները, այդ թվում՝ մասնակցությունը դասախոսություններին, սեմինար և գործնական պարապմունքներին, լաբորատոր աշխատանքներին և պրակտիկաներին, կուրսային և ավարտական աշխատանքների կատարումը, քննություններին նախապատրաստվելը և դրանք հանձնելը, անհատական հետազոտությունը և այլն,

- կրեդիտը չափում է միայն ուսանողի ուսումնական բեռնվածքը և նրա ուսումնական աշխատանքի /ուսումնառության ծավալը,

- կրեդիտը ուսանողին տրվում է միայն կրթական մոդուլով նախատեսված ելքային կրթական արդյունքի գնահատման շեմային չափանիշները բավարարելուց հետո: Ուսանողը վաստակում է կրթական մոդուլին հատկացված կրեդիտների ողջ

քանակը՝ քննական արդյունքների /գնահատականների կամ թվանշանների/ հետ միասին,

- կրեդիտը չի փոխարինում ուսանողի՝ թվանշաններով գնահատմանը, իսկ ուսանողի վաստակած կրեդիտների քանակը չի որոշում նրա ստացած թվանշանները,

- կրեդիտը չի չափում ուսանողի գիտելիքի որակը, այն չափվում է գնահատականներով: Կրեդիտային և գնահատման համակարգերի միջև փոխադարձ ներգործություն չկա:

## **2. Ուսանողի ուսումնական բեռնվածությունը և բակալավրի ծրագրի աշխատաձևավալը**

1.ՍՏԿ համալսարանում բակալավրի կրթական աստիճանում առկա ուսուցմամբ ուսանողի տարեկան ուսումնական բեռնվածությունը սահմանում է 1800 ժամ, որը համարժեք է 60 ECTS կրեդիտի:

2. ECTS կրեդիտը համարժեք է ուսանողի 30 ժամ լրիվ ուսումնական բեռնվածությանը:

3. Ուսումնական տարվա տևողությունը 40 շաբաթ է, որից 32-ը տրամադրում է ուսումնական պարապմունքներին: Ուսումնական գործընթացը կազմակերպում է 2 կիսամյակով՝ աշնանային և գարնանային:

4.Ուսանողի շաբաթական ուսումնական լրիվ բեռնվածության առավելագույն չափը, 45 ժամ է, որը համարժեք է 1.5 ակադեմիական կրեդիտի:

5.Բակալավրի կրթական ծրագրում ուսանողի շաբաթական լսարանային բեռնվածությունը կազմում է 24-30 ժամ (Առանց ֆիզդաստիարակության պարապմունքների):

6.Առկա ուսուցման համակարգում ընդգրկված ուսանողը կիսամյակում պետք է ունենա 30 կրեդիտ ուսումնական բեռնվածություն (10% թույլատրելի շեղումով), իսկ մեկ ուսումնական տարում 60 կրեդիտ:

7. Ուսման բարձր առաջադիմություն ցուցաբերած ուսանողը սահմանված կարգով կարող է ստանձնել լրացուցիչ ուսումնական բեռնվածություն:

8. Բակալավրի կրթական ծրագրի ուսումնական լրիվ աշխատաձևավալը 240 կրեդիտ է:

## **3.Դասընթացները և կրթական մոդուլները**

1.Ուսումնական ծրագրերում ներառված դասընթացները կամ կրթական մոդուլները ներկայացվում են հատկացված կրեդիտների նշումով:

2.Մեծածավալ դասընթացները բաժանվում են առանձին կրթական մոդուլների՝ յուրաքանչյուրը 1 կիսամյակ տևողությամբ: Դասընթացի բաժանումը մոդուլների կատարվում է այնպես, որ այն յուրացվի հնարավորինս սեղմ ժամկետներում:

3.Դասընթացները՝ կրթական մոդուլները, իրենց բնույթով բաժանվում են 2 հիմնական խմբի՝

ա/ պարտադիր դասընթացներ, որոնք ամրագրված են որոշակի կիսամյակներում,

բ/ կամընտրական դասընթացներ, որոնք առաջարկվող ցանկից ընտրում է ուսանողը, իսկ դրանց յուրացման կիսամյակը կարող է լինել ինչպես ամրագրված, այնպես էլ ազատ:

#### 4. Բակլավրի կրթական ծրագիրը և ավարտական պահանջները

##### 4.1. Ուսումնական ծրագիրը

Բակլավրի ուսումնական ծրագիրը ներառում է հինգ հիմնական կրթամաս՝ ընդհանուր հումանիտար և սոցիալ – տնտեսագիտական, ընդհանուր մաթեմատիկական և բնագիտական, ընդհանուր մասնագիտական և հատուկ մասնագիտական դասընթացներ, ինչպես նաև կրթական այլ մոդուլներ: Ծրագրի ընդհանուր կառուցվածքը ըստ մասնագիտությունների բերված է ստորև.

##### «ԷՆՅԻՅ. ՇԻ ՏՈՒՆՈՒՄ» ԱՅ ԵՅՅ. ՇԻ ՏՈՒՆՈՒՄ

Ի նԱՅ ԱՅ Ե	Ի ն՝ՇԻ Կ՝ն	Յ ԵԱԿԱՅ Ե- ՍՏՈՒՆՈՒՄ ՆՇ ԱՅ ԿՅ ԿԱ
ԱՅՈՒՆՅ ԿՏՈՒ ՆՈՒՄ ՅՇԻ Յ Ն՝ ԵՏՇՅ Ե- Ի ԿԻ յԵՅ. ՇԻ ՅԻՅԿ ՅՅ ՆԻ Յ ԿՇ ԻՅ ՍԱԿԻ ՆՅ ԻՅ Կ	36 32 4	12 10 2
ԱՅՈՒՆՅ ԿՏՈՒ ԱՅ ԱՅՈՒՆՅ ՇԻ ՅԻՅԿ ՍԿՅ. ՇԻ ՅԻՅԿ ՅՅ ՆԻ Յ ԿՇ ԻՅ ՍԱԿԻ ՆՅ ԻՅ Կ	10 8 2	5 4
ԱՅՈՒՆՅ ԿՏՈՒ ԱՅ ԵՅՅ. ՇԻ ՅԻՅԿ ԻՏՈՒՆՅ ՍՇԿ Յ ԵԵՅԻ Յ ԿՅՍՇ	160 4	37 2
ԵՅԻ ՏՈՒ ԱՅ ԵՅՅ. ՇԻ ՅԻՅԿ Յ ԵԱԿԱՅ ԵՅՍՇ	10	4
Ի նԱՅ ԻՅ Կ ՍԵ ՍՏՈՒՆՈՒՄ	24	4
ԱՅՈՒՆՅ ԱՅԿԱ	240	62

##### «ԵԿՅՈՒՆՅԻ ՇԻՅ ՆՅ ԵՐՏՈՒՆՅԻ ԿՅ ԿՅՅՅ» ԱՅ ԵՅՅ. ՇԻ ՏՈՒՆՈՒՄ

Ի նԱՅ ԱՅ Ե	Ի ն՝ՇԻ Կ՝ն	Յ ԵԱԿԱՅ Ե- ՍՏՈՒՆՈՒՄ ՆՇ ԱՅ ԿՅ ԿԱ
ԱՅՈՒՆՅ ԿՏՈՒ ՆՈՒՄ ՅՇԻ Յ Ն՝ ԵՏՇՅ Ե- Ի ԿԻ յԵՅ. ՇԻ ՅԻՅԿ ՅՅ ՆԻ Յ ԿՇ ԻՅ ՍԱԿԻ ՆՅ ԻՅ Կ	36 32 4	12 10 2
ԱՅՈՒՆՅ ԿՏՈՒ ԱՅ ԱՅՈՒՆՅ ՇԻ ՅԻՅԿ ՍԿՅ. ՇԻ ՅԻՅԿ ՅՅ ՆԻ Յ ԿՇ ԻՅ ՍԱԿԻ ՆՅ ԻՅ Կ	10 8 2	5 4
ԱՅՈՒՆՅ ԿՏՈՒ ԱՅ ԵՅՅ. ՇԻ ՅԻՅԿ ԻՏՈՒՆՅ ՍՇԿ Յ ԵԵՅԻ Յ ԿՅՍՇ	160 4	37 2
ԵՅԻ ՏՈՒ ԱՅ ԵՅՅ. ՇԻ ՅԻՅԿ Յ ԵԱԿԱՅ ԵՅՍՇ	10	4
Ի նԱՅ ԻՅ Կ ՍԵ ՍՏՈՒՆՈՒՄ	24	4
ԱՅՈՒՆՅ ԱՅԿԱ	240	62

«ԱՅԿ ԿԵՆՏՐ» ԱՅԿ ԿԵՆՏՐԻ ԳՐԱԳՐՈՒՄ

Դասակարգում	Դասակարգում	ԱՅԿ ԿԵՆՏՐԻ ԳՐԱԳՐՈՒՄ
ԱՅԿ ԿԵՆՏՐԻ ԳՐԱԳՐՈՒՄ ԱՅԿ ԿԵՆՏՐԻ ԳՐԱԳՐՈՒՄ	36	18
ԱՅԿ ԿԵՆՏՐԻ ԳՐԱԳՐՈՒՄ ԱՅԿ ԿԵՆՏՐԻ ԳՐԱԳՐՈՒՄ	18	5
ԱՅԿ ԿԵՆՏՐԻ ԳՐԱԳՐՈՒՄ ԱՅԿ ԿԵՆՏՐԻ ԳՐԱԳՐՈՒՄ	160 2	36 1
ԹՅՈՒՆՆԵՐ ԱՅԿ ԿԵՆՏՐԻ ԳՐԱԳՐՈՒՄ ԱՅԿ ԿԵՆՏՐԻ ԳՐԱԳՐՈՒՄ	10 2	4
Դասակարգում	24	4
ԱՅԿ ԿԵՆՏՐԻ ԳՐԱԳՐՈՒՄ	240	62

«Հաշվապահական հաշվառում» մասնագիտություն

Դասակարգում	Դասակարգում	ԱՅԿ ԿԵՆՏՐԻ ԳՐԱԳՐՈՒՄ
ԱՅԿ ԿԵՆՏՐԻ ԳՐԱԳՐՈՒՄ ԱՅԿ ԿԵՆՏՐԻ ԳՐԱԳՐՈՒՄ	36	18
ԱՅԿ ԿԵՆՏՐԻ ԳՐԱԳՐՈՒՄ ԱՅԿ ԿԵՆՏՐԻ ԳՐԱԳՐՈՒՄ	18	5
ԱՅԿ ԿԵՆՏՐԻ ԳՐԱԳՐՈՒՄ ԱՅԿ ԿԵՆՏՐԻ ԳՐԱԳՐՈՒՄ	160 2	36 1
ԹՅՈՒՆՆԵՐ ԱՅԿ ԿԵՆՏՐԻ ԳՐԱԳՐՈՒՄ ԱՅԿ ԿԵՆՏՐԻ ԳՐԱԳՐՈՒՄ	10 2	4
Դասակարգում	24	4
ԱՅԿ ԿԵՆՏՐԻ ԳՐԱԳՐՈՒՄ	240	62

Ուսանողի շաբաթական լսարանային բեռնվածությունը ծրագրում ըստ ուսումնական տարիների սահմանափակված է հետևյալ չափորոշիչներով.

1-ին տարի	2-րդ տարի	3-րդ տարի	4-րդ տարի
30 ժամ*	28 ժամ*	26 ժամ*	24 ժամ*

Ուսումնական կիսամյակի համար սահմանված է 20- շաբաթյա տևողությունը, որից 16 –ը հատկացվում է տեսական ուսուցման, իսկ 4-ը՝ քննաշրջանի համար: Ուսանողը կիսամյակում պետք է ունենա 30 կրեդիտ ուսումնական բեռնվածություն /10% թույլատրելի շեղումով/, իսկ մեկ ուսումնական տարում՝ 60կրեդիտ: Ուսումնական ծրագրի լրիվ աշխատաձևվալը համապատասխանում է 240 կրեդիտի:

4.1.1. Ընդհանուր հումանիտար և սոցիալ – տնտեսագիտական կրթամաս

Ծրագրի ընդհանուր հումանիտար և սոցիալ – տնտեսագիտական /ՀՍ/ կրթամասը ներառում է կրթական մոդուլների երկու փաթեթ՝ պարտադիր և

կամընտրական: Դրանց առկայությունը ծրագրում նպատակաուղղված է համալսարանական կրթության ընդհանուր տեսկան հենքի ձևավորմանը:

### ՀՍ պարտադիր դասընթացներ

ՀՍ պարտադիր դասընթացների ցանկը ներառում է ամրագրված բովանդակային կառուցվածքով և հաշվարկված կրեդիտատարությամբ հետևյալ մոդուլ-դասընթացները.

Մոդուլ-դասընթաց	Կրեդիտ	Լսարանային ժամ (դ/գ/լ) <sup>1</sup>	Կիսամյակ	Գնահատման ձևը
Հայոց լեզու և գրականություն-1	2	32 (8/24/0)	1	ստուգարք
Հայոց լեզու և գրականություն-2	2	32 (8/24/0)	2	քննություն
Ռուսաց լեզու-1	4	64 (0/64/0)	1	ստուգարք
Ռուսաց լեզու-2	4	64 (0/64/0)	2	ստուգարք
Օտար լեզու-1 <sup>2</sup>	4	64 (0/64/0)	1	ստուգարք
Օտար լեզու-2	4	64 (0/64/0)	2	ստուգարք
Լրացուցիչ լեզվական դասընթաց (Ռուսաց լեզու-3 կամ Օտար լեզու-3)	4	64 (0/64/0)	3	քննություն
Հայոց պատմության հիմնահարցեր-1	2	32 (24/8/0)	1	ստուգարք
Հայոց պատմության հիմնահարցեր-2	2	32 (24/8/0)	2	քննություն
Փիլիսոփայության հիմունքներ	4	64 (48/16/0)	3	քննություն
Ֆիզդաստիարակություն	-	128 (0/128/0)	1,2,3,4	ստուգարք

### ՀՍ կամընտրական դասընթացներ

ՀՍ կամընտրական դասընթացների ցանկը պարունակում է համեմատաբար ազատ բովանդակային կառուցվածքով և հաշվարկված կրեդիտատարությամբ հետևյալ մոդուլները, որոնցից ուսանողը հնարավորություն ունի ընտրելու երկուսը.

Մոդուլ-դասընթաց	Կրեդիտ	Լսարանային ժամ (դ/գ/լ)	Կիսամյակ	Գնահատման ձևը
Քաղաքագիտություն	2	32 (32/0/0)	4	ստուգարք
Երավագիտություն				ստուգարք
Մշակութաբանություն	2	32 (32/0/0)	3	ստուգարք
Կրոնների պատմություն				ստուգարք

<sup>1</sup> Այսուհետ՝ *դ* – դասախոսություն, *գ* – գործնական կամ սեմինար պարապմունք, *լ* – լաբորատոր աշխատանք:

<sup>2</sup> Անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն



**4.1.2. Ընդհանուր մաթեմատիկական և բնագիտական կրթամաս**

Ծրագրի ընդհանուր մաթեմատիկական և բնագիտական (ԸՄԲ) կրթամասը նույնպես ներառում է կրթական մոդուլների երկու փաթեթ՝ պարտադիր և կամրնտրական:

**ԸՄԲ պարտադիր դասընթացներ**

ԸՄԲ պարտադիր դասընթացների ցանկը ներառում է ամրագրված բովանդակային կառուցվածքով և հաշվարկված կրեդիտատարությամբ հետևյալ մոդուլները.

Մոդուլ-դասընթաց	Կրեդիտ	Լսարանային ժամ (դ/գ/լ)	Կիսամյակ	Գնահատման ձևը
<i>Համակարգչից օգտվելու հմտություններ</i>	2	32 (8/24/0)	1	<i>ստուգարք</i>
<i>Քաղաքացիական պաշտպանություն</i>	2	32 (24/8/0)	5	<i>ստուգարք</i>
<i>Արտակարգ իրավիճակներում բնակչության առաջին բուժօգնություն</i>	2	32 (8/24/0)		<i>ստուգարք</i>
<i>Էկոլոգիայի և բնապահպանության հիմունքներ</i>	2	32 (32/0/0)	1	<i>ստուգարք</i>

**ԸՄԲ կամրնտրական դասընթացներ**

ԸՄԲ կամրնտրական դասընթացների ցանկը պարունակում է համեմատաբար ազատ բովանդակային կառուցվածքով և հաշվարկված կրեդիտատարությամբ հետևյալ մոդուլները, որոնցից ուսանողը հնարավորություն ունի ընտրելու մեկը.

Մոդուլ-դասընթաց	Կրեդիտ	Լսարանային ժամ (դ/գ/լ)	Կիսամյակ	Գնահատման ձևը
<i>Բնագիտության ժամանակակից կոնցեպցիաներ</i>	2	32 (32/0/0)	1	<i>ստուգարք</i>

**4.1.3. Ընդհանուր մասնագիտական կրթամաս**

Կրթական ծրագրի ընդհանուր մասնագիտական (ԸՄԴ) կրթամասը նպատակաուղղված է տվյալ մասնագիտությամբ պատրաստությունն իրականացնելու գործառույթի կատարմանը: Դրա բովանդակությունը, դասընթացների կազմը և դրանց կրեդիտատարությունը առանձին մասնագիտությունների համար բերված են ստորև.

Մոդուլ-դասընթաց	Կրեդիտ	Լսարանային ժամ (դ/գ/լ)	Կիսամյակ	Գնահատման ձևը
Արտ. երկրներին պետության և իրավունքի պատմություն 1	5	64 (32/32/0)	1	քննություն
Պետության և իրավունքի տեսություն -1	5	96 (32/64/0)	1	քննություն
Պետության և իրավունքի տեսություն -2	8	128 (48/80/0)	2	քննություն
Իրավագիտության ներածություն	2	32 (16/16/0)	1	ստուգարք
Արտ. երկրներին պետության և իրավունքի պատմություն 2	4	64 (36/28/0)	2	քննություն
Հայաստանի պետության և իրավունքի պատմություն	4	64 (32/32/0)	2	քննություն
Արտ. երկրներին սահմանադրական իրավունք	5	64 (32/32/0)	3	քննություն
Հոռմեական /մասնավոր/ իրավունք	2	32 (20/12/0)	2	ստուգարք
ՀՀ քաղաքացիական իրավունք - 1	4	64 (32/32/0)	3	քննություն
ՀՀ քրեական իրավունք - 1	5	96 (32/64/0)	3	քննություն
ՀՀ սահմանադրական իրավունք	4	64 (10/54/0)	3	ստուգարք
ՀՀ վարչական իրավունք	4	64 (32/32/0)	4	քննություն
Միջազգային մասնավոր իրավունք	4	64 (32/32/0)	4	քննություն
ՀՀ քաղաքացիական իրավունք - 2	4	64 (32/32/0)	4	քննություն
ՀՀ քրեական իրավունք - 2	4	64 (32/32/0)	4	քննություն
ՀՀ քաղաքացիական դատավարություն - 1	4	64 (0/64/0)	4	ստուգարք
ՀՀ քրեական դատավարություն - 1	4	64 (32/32/0)	4	ստուգարք
ՀՀ քաղաքացիական իրավունք - 3	5	64 (32/32/0)	5	քննություն
ՀՀ քրեական իրավունք - 3	4	64 (32/32/0)	5	քննություն
ՀՀ քաղաքացիական դատավարություն - 2	5	64 (32/32/0)	5	քննություն
ՀՀ քրեական դատավարություն -2	4	64 (32/32/0)	5	քննություն
Միջազգային հանրային իրավունք	4	64 (32/32/0)	5	ստուգարք
ՀՀ քաղաքացիական դատավարություն - 3	6	96 (56/40/0)	6	քննություն
ՀՀ քրեական դատավարություն -3	4	64 (32/32/0)	6	քննություն
Միջազգային մասնավոր իրավունք	4	64 (32/32/0)	6	քննություն
Մաքսային իրավունք	4	64 (32/32/0)	6	քննություն
Տնտեսական իրավունք	4	64 (32/32/0)	6	ստուգարք
Բնապահպանական իրավունք	2	32 (20/12/0)	6	ստուգարք

ՀՀ աշխատանքային իրավունք	5	64 (32/32/0)	7	քննություն
ՀՀ ֆինանսական իրավունք	5	64 (32/32/0)	7	քննություն
Մունիցիպալ իրավունք	6	96 (64/32/0)	7	քննություն
ՀՀ ընտանեկան իրավունք	5	64 (32/32/0)	7	ստուգարք
Հարկային իրավունք	6	64 (48/16/0)	7	քննություն
ՀՀ հողային իրավունք	6	80 (40/40/0)	8	քննություն
Կրիմինոլագիա	5	80 (48/32/0)	8	քննություն

«Հաշվողական տեխնիկա և ծրագրավորում» ԱՅ ԵՄՅ . ՇԻ ձՈՒՅՈՒՄ

Մոդուլ-դասընթաց	Կրեդիտ	Լսարանային ժամ (դ/գ/լ)	Կիսամյակ	Գնահատման ձևը
Մաթեմատիկական անալիզ -1	5	64 (32/32/0)	1	քննություն
Քոմպյուտերների կիրառում և ծրագրավորում	5	96 (32/64/0)	1	քննություն
Մաթեմատիկական անալիզ -2	8	128 (48/80/0)	2	քննություն
Մասնագիտության ներածություն	2	32 (16/16/0)	1	ստուգարք
Կիրառական վիճակագրություն և հավանականությունների տեսություն	4	64 (36/28/0)	2	քննություն
Կիրառական տեղեկատվական համակարգերի տեսություն	4	64 (32/32/0)	2	քննություն
Համակարգչագիտություն և ծրագրավորում	5	64 (32/32/0)	3	քննություն
ԷՀՄ և ծրագրավորում	2	32 (20/12/0)	2	ստուգարք
Մաթեմատիկական տրամաբանություն	4	64 (32/32/0)	3	քննություն
Համակարգային ծրագրավորում	5	96 (32/64/0)	3	քննություն
Քոմպյուտերային գրաֆիկա	4	64 (10/54/0)	3	ստուգարք
Գործույթների հետազոտման մաթեմատիկական մեթոդներ	4	64 (32/32/0)	4	քննություն
Քոմպյուտերային ցանցեր և հեռահաղորդակցություն	4	64 (32/32/0)	4	քննություն
Անցումային տնտեսության տեսություն	4	64 (32/32/0)	4	քննություն
Համաշխարհային տնտեսություն	4	64 (32/32/0)	4	քննություն
Գործավարություն օտար լեզվով	4	64 (0/64/0)	4	ստուգարք
Ձեռնարկատիրական իրավունք	4	64 (32/32/0)	4	ստուգարք
Միջազգային տնտեսագիտություն	5	64 (32/32/0)	5	քննություն
Միկրոտնտեսագիտություն	4	64 (32/32/0)	5	քննություն

Ձեռնարկության էկոնոմիկա	5	64 (32/32/0)	5	քննություն
Էկոնոմետրիկա	4	64 (32/32/0)	5	քննություն
Ագրարային սեկտորի էկոնոմիկա	4	64 (32/32/0)	5	ստուգարք
Տնտեսագիտական մտքի պատմություն	6	96 (56/40/0)	6	քննություն
Հաշվապահական հաշվառում և աուդիտ	4	64 (32/32/0)	6	քննություն
Տնտեսական վիճակագրություն	4	64 (32/32/0)	6	քննություն
Մակրոտնտեսագիտություն	4	64 (32/32/0)	6	քննություն
Ֆինանսական շուկաներ	4	64 (32/32/0)	6	ստուգարք
Ծառայությունների ոլորտի էկոնոմիկա	2	32 (20/12/0)	6	ստուգարք
Բանկային գործ	5	64 (32/32/0)	7	քննություն
Մարդկային ռեսուրսներ և աշխատանքի էկոնոմիկա	5	64 (32/32/0)	7	քննություն
Մենեջմենթի հիմունքներ	6	96 (64/32/0)	7	քննություն
Մարքեթինգի հիմունքներ	5	64 (32/32/0)	7	ստուգարք
Ֆինանսներ	6	64 (48/16/0)	7	քննություն
Տնտեսության պետական կարգավորում	6	80 (40/40/0)	8	քննություն
Բիզնեսի կազմակերպում և կառավարում	5	80 (48/32/0)	8	քննություն

**«Ֆինանսներ» ՍՅԵՅ · ՇԻ ՃՈՒՅՈՒՄ**

Սողուլ-դասընթաց	Կրեդիտ	Լսարանային ժամ (դ/գ/լ)	Գիսամյակ	Գնահատման ձևը
Տնտեսագիտության ներածություն	5	64 (32/32/0)	1	քննություն
Մաթեմատիկական անալիզ -1	5	96 (32/64/0)	1	քննություն
Մաթեմատիկական անալիզ -2	8	128 (48/80/0)	2	քննություն
Վերլուծական երկրաչափություն և գծային հանրահաշիվ 1	2	32 (16/16/0)	1	ստուգարք
Վերլուծական երկրաչափություն և գծային հանրահաշիվ 1	4	64 (36/28/0)	2	քննություն
Տնտեսագիտության տեսություն -1	4	64 (32/32/0)	2	քննություն
Տնտեսագիտության տեսություն -2	5	64 (32/32/0)	3	քննություն
Տնտեսական պատմություն-1	2	32 (20/12/0)	2	ստուգարք
Տնտեսական պատմություն-2	4	64 (32/32/0)	3	քննություն
Գործույթների հետազոտման մաթ. մեթոդներ	5	96 (32/64/0)	3	քննություն
Տնտեսական ինֆորմատիկա	4	64 (10/54/0)	3	ստուգարք

Հավանականություն և կիրառական վիճակագրություն	4	64 (32/32/0)	4	քննություն
Տնտեսական իրավիճակների մոդելավորում	4	64 (32/32/0)	4	քննություն
Անցումային տնտեսության տեսություն	4	64 (32/32/0)	4	քննություն
Համաշխարհային տնտեսություն	4	64 (32/32/0)	4	քննություն
Գործավարություն օտար լեզվով	4	64 (0/64/0)	4	ստուգարք
Ձեռնարկատիրական իրավունք	4	64 (32/32/0)	4	ստուգարք
Միջազգային տնտեսագիտություն	5	64 (32/32/0)	5	քննություն
Միկրոտնտեսագիտություն	4	64 (32/32/0)	5	քննություն
Ձեռնարկության էկոնոմիկա	5	64 (32/32/0)	5	քննություն
Էկոնոմետրիկա	4	64 (32/32/0)	5	քննություն
Ազրարային սեկտորի էկոնոմիկա	4	64 (32/32/0)	5	ստուգարք
Տնտեսագիտական մտքի պատմություն	6	96 (56/40/0)	6	քննություն
Հաշվապահական հաշվառում և աուդիտ	4	64 (32/32/0)	6	քննություն
Տնտեսական վիճակագրություն	4	64 (32/32/0)	6	քննություն
Մակրոտնտեսագիտություն	4	64 (32/32/0)	6	քննություն
Ֆինանսական շուկաներ	4	64 (32/32/0)	6	ստուգարք
Ծառայությունների ոլորտի էկոնոմիկա	2	32 (20/12/0)	6	ստուգարք
Բանկային գործ	5	64 (32/32/0)	7	քննություն
Մարդկային ռեսուրսներ և աշխատանքի էկոնոմիկա	5	64 (32/32/0)	7	քննություն
Մենեջմենթի հիմունքներ	6	96 (64/32/0)	7	քննություն
Մարքեթինգի հիմունքներ	5	64 (32/32/0)	7	ստուգարք
Ֆինանսներ	6	64 (48/16/0)	7	քննություն
Տնտեսության պետական կարգավորում	6	80 (40/40/0)	8	քննություն
Բիզնեսի կազմակերպում և կառավարում	5	80 (48/32/0)	8	քննություն

«Հաշվապահական հաշվառում» ՄՅԵՅՅ. ՇԻ ՁԾՁԾԾԾ

Մոդուլ-դասընթաց	Կրեդիտ	Լսարանային ժամ (դ/գ/լ)	Կիսամյակ	Գնահատման ձևը
Տնտեսագիտության ներածություն	5	64 (32/32/0)	1	քննություն
Մաթեմատիկական անալիզ -1	5	96 (32/64/0)	1	քննություն
Մաթեմատիկական անալիզ -2	8	128 (48/80/0)	2	քննություն
Վերլուծական երկրաչափություն և գծային հանրահաշիվ 1	2	32 (16/16/0)	1	ստուգարք

Վերլուծական երկրաչափություն և գծային հանրահաշիվ 1	4	64 (36/28/0)	2	քննություն
Տնտեսագիտության տեսություն -1	4	64 (32/32/0)	2	քննություն
Տնտեսագիտության տեսություն -2	5	64 (32/32/0)	3	քննություն
Տնտեսական պատմություն-1	2	32 (20/12/0)	2	ստուգաք
Տնտեսական պատմություն-2	4	64 (32/32/0)	3	քննություն
Գործույթների հետազոտման մաթ. մեթոդներ	5	96 (32/64/0)	3	քննություն
Տնտեսական ինֆորմատիկա	4	64 (10/54/0)	3	ստուգաք
Հավանականություն և կիրառական վիճակագրություն	4	64 (32/32/0)	4	քննություն
Տնտեսական իրավիճակների մոդելավորում	4	64 (32/32/0)	4	քննություն
Անցումային տնտեսության տեսություն	4	64 (32/32/0)	4	քննություն
Համաշխարհային տնտեսություն	4	64 (32/32/0)	4	քննություն
Գործավարություն օտար լեզվով	4	64 (0/64/0)	4	ստուգաք
Ձեռնարկատիրական իրավունք	4	64 (32/32/0)	4	ստուգաք
Միջազգային տնտեսագիտություն	5	64 (32/32/0)	5	քննություն
Միկրոտնտեսագիտություն	4	64 (32/32/0)	5	քննություն
Ձեռնարկության էկոնոմիկա	5	64 (32/32/0)	5	քննություն
Էկոնոմետրիկա	4	64 (32/32/0)	5	քննություն
Ագրարային սեկտորի էկոնոմիկա	4	64 (32/32/0)	5	ստուգաք
Տնտեսագիտական մտքի պատմություն	6	96 (56/40/0)	6	քննություն
Հաշվապահական հաշվառում և աուդիտ	4	64 (32/32/0)	6	քննություն
Տնտեսական վիճակագրություն	4	64 (32/32/0)	6	քննություն
Մակրոտնտեսագիտություն	4	64 (32/32/0)	6	քննություն
Ֆինանսական շուկաներ	4	64 (32/32/0)	6	ստուգաք
Ծառայությունների ոլորտի էկոնոմիկա	2	32 (20/12/0)	6	ստուգաք
Բանկային գործ	5	64 (32/32/0)	7	քննություն
Մարդկային ռեսուրսներ և աշխատանքի էկոնոմիկա	5	64 (32/32/0)	7	քննություն
Մենեջմենթի հիմունքներ	6	96 (64/32/0)	7	քննություն
Մարքեթինգի հիմունքներ	5	64 (32/32/0)	7	ստուգաք
Ֆինանսներ	6	64 (48/16/0)	7	քննություն
Տնտեսության պետական կարգավորում	6	80 (40/40/0)	8	քննություն
Բիզնեսի կազմակերպում և կառավարում	5	80 (48/32/0)	8	քննություն

Ծրագրի մասնագիտական հատվածում նախատեսված է նաև 2-ական կրեդիտ աշխատաձևով կուրսային 2 աշխատանքների կատարում, որոնց արդյունքների ստուգումը իրականացվում է տարբերակված գնահատման եղանակով (թվանշանով):

#### 4.1.4. Հատուկ մասնագիտական կրթամաս

Կրթական ծրագրում հատուկ մասնագիտական (ՀՄԴ) կրթամասի առկայությունը պայմանավորված է տվյալ մասնագիտության որոշ ոլորտների առավել խորը ուսուցմամբ, որը բխում է ծրագրի նպատակներից և խնդիրներից: ՀՄԴ կրթամասով նախատեսվող ուսումնական աշխատաձևերը կազմում է 12 կրեդիտ:

«ԲՆՅ ԻՅ . ՇԻ ճՈՂՃՈՅ» ՍՅ ԵՄՅ . ՇԻ ճՈՂՃՈՅ

Սողուլ-դասընթաց *)	Կրեդիտ	Լսարանային ժամ (դ/գ/լ)	Կիսամյակ	Գնահատման ձևեր
ՀՀ իրավապահ մարմիններ	2	32 (20/12/0)	5	ստուգարք
Մտավոր սեփականության իրավունք				
Բանկային իրավունք				
Միջազգային պայմանագրային իրավունք	2	32 (20/12/0)	6	ստուգարք
Դատական բժշկություն				
Սեփականության իրավունք				
Դիվանագիտական իրավունք	3	32 (32/0/0)	7	ստուգարք
Ժառանգական իրավունք				
Իրավաբանական տեղեկատվական համակարգեր				
Դատական հոգեբանություն	3	32 (32/0/0)	7	ստուգարք
Նոտարիատը ՀՀ-ում				
ՀՀ փաստաբանական ծառայություն				

\*) 5-8 կիսամյակներում վեց ամբիոնի գծով նախատեսված 24 հատուկ դասընթացից յուրաքանչյուր կիսամյակում ուսանողն ընտրում է մեկը՝ չկրկնելով ամբիոնը:

« Հաշվողական տեխնիկա և ծրագրավորում» ՍՅ ԵՄՅ . ՇԻ ճՈՂՃՈՅ

Սողուլ-դասընթաց *)	Կրեդիտ	Լսարանային ժամ (դ/գ/լ)	Կիսամյակ	Գնահատման ձևեր
ՀՀ իրավապահ մարմիններ	2	32 (20/12/0)	5	ստուգարք
Մտավոր սեփականության իրավունք				
Բանկային իրավունք				
Միջազգային պայմանագրային իրավունք	2	32 (20/12/0)	6	ստուգարք
Դատական բժշկություն				

<i>Մեփականության իրավունք</i>				
<i>Դիվանագիտական իրավունք</i>	3	32 (32/0/0)	7	ստուգարք
<i>Ժառանգական իրավունք</i>				
<i>Իրավաբանական տեղեկատվական համակարգեր</i>				
<i>Դատական հոգեբանություն</i>	3	32 (32/0/0)	7	ստուգարք
<i>Նոտարիատը ՀՀ-ում</i>				
<i>ՀՀ փաստաբանական ծառայություն</i>				

\*) 5-8 կիսամյակներում վեց ամբիոնի գծով նախատեսված 24 հատուկ դասընթացից յուրաքանչյուր կիսամյակում ուսանողն ընտրում է մեկը՝ չկրկնելով ամբիոնը:

**«Ֆինանսներ» ՍՅԵՅ՝ ՇԻ ճԹՁԹԿ**

<b>Մոդուլ-դասընթաց *)</b>	<b>Կրեդիտ</b>	<b>Լսարանային ժամ (դ/գ/լ)</b>	<b>Կիսամյակ</b>	<b>Գնահատման ձևը</b>
<i>ՀՀ իրավապահ մարմիններ</i>	2	32 (20/12/0)	5	ստուգարք
<i>Մտավոր սեփականության իրավունք</i>				
<i>Բանկային իրավունք</i>				
<i>Միջազգային պայմանագրային իրավունք</i>	2	32 (20/12/0)	6	ստուգարք
<i>Դատական բժշկություն</i>				
<i>Մեփականության իրավունք</i>				
<i>Դիվանագիտական իրավունք</i>	3	32 (32/0/0)	7	ստուգարք
<i>Ժառանգական իրավունք</i>				
<i>Իրավաբանական տեղեկատվական համակարգեր</i>				
<i>Դատական հոգեբանություն</i>	3	32 (32/0/0)	7	ստուգարք
<i>Նոտարիատը ՀՀ-ում</i>				
<i>ՀՀ փաստաբանական ծառայություն</i>				

\*) 5-8 կիսամյակներում վեց ամբիոնի գծով նախատեսված 24 հատուկ դասընթացից յուրաքանչյուր կիսամյակում ուսանողն ընտրում է մեկը՝ չկրկնելով ամբիոնը:



Մոդուլ-դասընթաց *)	Կրեդիտ	Լսարանային ժամ (դ/գ/լ)	Կիսամյակ	Գնահատման ձևը
<i>ՀՀ իրավապահ մարմիններ</i>	2	32 (20/12/0)	5	ստուգարք
<i>Մտավոր սեփականության իրավունք</i>				
<i>Բանկային իրավունք</i>				
<i>Միջազգային պայմանագրային իրավունք</i>	2	32 (20/12/0)	6	ստուգարք
<i>Դատական բժշկություն</i>				
<i>Սեփականության իրավունք</i>				
<i>Դիվանագիտական իրավունք</i>	3	32 (32/0/0)	7	ստուգարք
<i>Ժառանգական իրավունք</i>				
<i>Իրավաբանական տեղեկատվական համակարգեր</i>				
<i>Դատական հոգեբանություն</i>	3	32 (32/0/0)	7	ստուգարք
<i>Նոտարիատը ՀՀ-ում</i>				
<i>ՀՀ փաստաբանական ծառայություն</i>				

\*) 5-8 կիսամյակներում վեց ամբիոնի գծով նախատեսված 24 հատուկ դասընթացից յուրաքանչյուր կիսամյակում ուսանողն ընտրում է մեկը՝ չկրկնելով ամբիոնը:

#### 4.1.5. Կրթական այլ մոդուլներ

Կրթական ծրագրի այս բաժինն ընդգրկում է ամրագրված կրեդիտային արժեքով հետևյալ ոչ դասընթացային կրթական մոդուլները.

Մոդուլ	Կրեդիտ	Կիսամյակ	Գնահատման ձևը
<i>Ուսումնական (հաշվողական) պրակտիկա</i>	4	4	
<i>Արտադրական պրակտիկա</i>	4	6	ստուգարք
<i>Ամփոփիչ մասնագիտական քննություն</i>	4	8	քննություն
<i>Ավարտական աշխատանք</i>	12	8	քննություն

## 4.2. Ավարտական պահանջները

### 4.2. 1. Ընդհանուր ավարտական պահանջներ

1. Բակալավրի որակավորման աստիճան ստանալու համար ԱՏԿՀ ուսանողը պետք է հաջողությամբ լրացնի 240 կրեդիտ ուսումնական բեռնվածություն (ներառյալ կուրսային աշխատանքները և պրակտիկաները), որոնց համար հաշվարկված հանրագումարային միջին որակական գնահատականը (ՄՈԳ)<sup>3</sup> պետք է կազմի առնվազն 8,00՝ ներառյալ 4 կրեդիտ արժեքով մասնագիտական ամփոփիչ քննությունը և 12 կրեդիտ արժեքով ավարտական աշխատանքը:
2. Բոլոր ուսանողները, մասնագիտությունից անկախ, պետք է կուտակեն 36 կրեդիտ *հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական դասընթացների կրթամասից* (այդ թվում՝ 4 կրեդիտ՝ կամընտրական դասընթացների առաջարկվող ցանկից), 10 կրեդիտ՝ *մաթեմատիկական և բնագիտական դասընթացների կրթամասից* (ներառյալ 2 կրեդիտ՝ կամընտրական դասընթացների ցանկից) և առնվազն 24 կրեդիտ՝ պրակտիկայից և եզրափակիչ ատեստավորման ձևերից:

#### **4.2.2. Մասնագիտական ավարտական պահանջներ**

3. Մնացած կրեդիտների բովանդակային կազմը (158 կրեդիտ) սահմանվում է՝ ելնելով նշված մասնագիտություններով բակալավրի պատրաստման ծրագրի ելքային կրթական արդյունքներով սահմանված մասնագիտական կարողությունների և հմտությունների ձեռքբերման պայմանից, որը լրացվում է ընդհանուր մասնագիտական կրթամասի (տես կետ 4.1.3) և հատուկ մասնագիտական կրթամասի (տես կետ 4.1.4) առաջարկվող առարկայացանկերով:

### **5. Գիտելիքների ստուգման և գնահատման համակարգը**

#### **5.1. Համակարգի հիմնադրույթները**

1. ԱՏԿՀ-ում գործում է ուսանողների գիտելիքների պարբերական ստուգման և գնահատման բազմագործոն համակարգ, որի կիրարկման հիմնական նպատակներն են՝
  - ա) ուսումնական կիսամյակի ընթացքում գիտելիքների անընդհատ ստուգման և գնահատման օգնությամբ կազմակերպել ուսումնառության համաչափ աշխատանքային գործընթաց, խթանել ուսանողի ինքնուրույն աշխատանքը և բարելավել դասահաճախումները,
  - բ) անհատական առաջադրանքների և ընթացիկ ստուգումների (քննությունների) օգնությամբ բարելավել դասընթացի արդյունարար գնահատման արժանահավատությունն ու օբյեկտիվությունը՝ գիտելիքների գնահատման ընթացքում հաշվի առնելով ուսումնական գործընթացի մի շարք բաղադրիչներ և դրանց կարևորության աստիճանը:
2. Գիտելիքների ստուգումը և գնահատումը պարունակում են հետևյալ բաղադրիչները՝
  - ա) ուսումնական գործընթացին ուսանողի մասնակցության աստիճանի գնահատում դասահաճախումների հաշվառման օգնությամբ,

<sup>3</sup> ՄՈԳ-ի վերաբերյալ տես 6-րդ բաժնի 7-րդ կետը:

- բ) դասընթացի (ուսումնական մոդուլի) ենթաբաժինների և ծրագրով նախատեսված անհատական առաջադրանքների կատարման և յուրացման ընթացիկ ստուգում և գնահատում կիսամյակի ընթացքում (ընթացիկ քննություններ կամ ստուգումներ),
- գ) ամբողջ դասընթացի կամ ուսումնական մոդուլի եզրափակիչ գնահատում քննաշրջանում,
- դ) ստուգման արդյունքների ինտեգրում՝ դասընթացին ուսանողի մասնակցության աստիճանի, ընթացիկ և եզրափակիչ գնահատումների հիման վրա դասընթացի (կրթական մոդուլի) արդյունարար գնահատականի ձևավորում:

## 5.2. *Գնահատման մեթոդաբանությունը*

1. Ելնելով մասնագիտության ուսումնական պլանով նախատեսված դասընթացների (կրթական մոդուլների) աշխատաձևավալից, պարապմունքի ձևից, դասավանդման մեթոդներից և հաշվի առնելով դասընթացի կարևորությունը ուսանողի մասնագիտական կարողությունների և հմտությունների ձևավորման մեջ՝ դասընթացներն ըստ գնահատման ձևի բաժանվում են 2 խմբի՝

*ա) եզրափակիչ գնահատումով դասընթացներ,*

*բ) առանց եզրափակիչ գնահատման դասընթացներ:*

Յուրաքանչյուր կիսամյակային քննաշրջանում ներառված են *եզրափակիչ գնահատումով* առավելագույնը 4 մասնագիտական դասընթաց, բացառությամբ առաջին կիսամյակի, որտեղ այդ դասընթացների քանակը սահմանափակվում է 3-ով:

2. *Եզրափակիչ գնահատումով դասընթացը* քննաշրջանի ընթացքում անցկացվող եզրափակիչ քննության հետ մեկտեղ նախատեսում է 2 ընթացիկ (միջանկյալ) քննություն: Ընթացիկ քննությունները պարտադիր կերպով անց են կացվում գրավոր, իսկ եզրափակիչ քննության ձևը դասընթացը կազմակերպող ամբիոնի առաջարկությամբ հաստատում է ֆակուլտետի ղեկանը:
3. *Առանց եզրափակիչ գնահատման դասընթացը* գնահատվում է կիսամյակի ընթացքում ուսումնական նյութի յուրացման աստիճանը որոշող 4 ընթացիկ ստուգումների (գնահատումների) արդյունքներով: Ընթացիկ ստուգումներն անց են կացվում կարճ հարցումների, փոքրածավալ գրավոր/ստուգողական աշխատանքների, անհատական առաջադրանքների (ռեֆերատ, էսսե և այլն) և նման կարգի այլ հանձնարարությունների կատարողականի ստուգման միջոցով: Ընթացիկ ստուգման ձևն ընտրում է դասընթացը կազմակերպող ամբիոնը:
4. *Եզրափակիչ գնահատումով դասընթացից* (ուսումնական մոդուլից) ուսանողի ստացած արդյունարար (կիսամյակային) գնահատականը/միավորը ( $Q_{\text{ար}}$ ) ձևավորվում է կիսամյակի ընթացքում՝ ըստ հետևյալ բաղադրամասերի՝

ա) դասընթացի լսարանային պարապմունքներին ուսանողի մասնակցության աստիճանից՝  $Q_{մաս.}$ , որը լիարժեք իրականացնելու դեպքում ուսանողը վաստակում է 4 միավոր: Դասընթացի լսարանային պարապմունքներին ուսանողի մասնակցության աստիճանը գնահատվում է հետևյալ սանդղակով.

Աղյուսակ 1.

Մասնակցության աստիճանը (%)	Հատկացվող միավորը
90-100	4
80-90	3
70-80	2
60-70	1
<60	0

բ) ուսուցանվող նյութի՝ ուսանողի կողմից յուրացման աստիճանի ստուգման նպատակով անցկացվող 2 ընթացիկ (միջանկյալ) քննությունների արդյունքներից ( $\Sigma P_{ընթ.}$ ), որոնցից յուրաքանչյուրին հատկացվում է առավելագույնը 4 միավոր,

գ) եզրափակիչ քննության արդյունքից ( $P_{եզր.}$ ), որը կարող է գնահատվել մինչև 8 միավոր:

Դասընթացի (ուսումնական մոդուլի) արդյունաբար գնահատականը/միավորը հաշվարկվում է որպես գնահատման առանձին բաղադրամասերով վաստակած միավորների գումար՝

$$Q_{ար} = Q_{մաս.} + \Sigma P_{ընթ.} + P_{եզր.} :$$

Ըստ այդմ, եզրափակիչ գնահատումով դասընթացն ունի գնահատման հետևյալ սխեման, որտեղ տրված են գնահատման առանձին բաղադրամասերի համար սահմանված հնարավոր առավելագույն միավորները (բոլոր բաղադրամասերը գնահատվում են ամբողջ միավորներով).

Աղյուսակ 2.

Գնահատման բաղադրամասը	$Q_{մաս.}$	$P_{ընթ.1}$	$P_{ընթ.2}$	$P_{եզր.}$	$Q_{ար}$
Միավորը	4	4	4	8	<b>20</b>

Օրինակ, եթե ուսանողի մասնակցությունը դասընթացին գնահատվել է 3 միավոր, դասընթացի համար նախատեսված 2 ընթացիկ քննություններից նա վաստակել է համապատասխանաբար 3 և 4 միավորներ, իսկ եզրափակիչ քննությունից՝ 6 միավոր, ապա այդ դասընթացի արդյունաբար գնահատականը կլինի՝

$$Q_{ար} = 3 + 3 + 4 + 6 = 16 :$$

5. *Առանց եզրափակիչ գնահատման դասընթացից* (ուսումնական մոդուլից) ուսանողի ստացած արդյունաբար (կիսամյակային) գնահատականը/միավորը ( $Գ_{ար}$ ) ձևավորվում է կիսամյակի ընթացքում՝ ըստ հետևյալ բաղադրամասերի՝

ա) դասընթացի լսարանային պարապմունքներին ուսանողի մասնակցության աստիճանից՝  $Գ_{մաս.}$ , որը լիարժեք իրականացնելու դեպքում ուսանողը կարող է վաստակել 4 միավոր: Մասնակցության աստիճանը գնահատվում է համաձայն *աղյուսակ 1*-ում բերված սանդղակի:

բ) ուսուցանվող նյութի՝ ուսանողի կողմից յուրացման աստիճանի ստուգման նպատակով անցկացվող 4 ընթացիկ ստուգումների արդյունքներից ( $\sum U_{ընթ.}$ ), որոնցից յուրաքանչյուրին հատկացվում է առավելագույնը 4 միավոր:

Դասընթացի (ուսումնական մոդուլի) արդյունաբար գնահատականը/միավորը հաշվարկվում է որպես գնահատման առանձին բաղադրամասերով վաստակած միավորների գումար՝

$$Գ_{ար} = Գ_{մաս.} + \sum U_{ընթ.} :$$

Ըստ այդմ, *առանց եզրափակիչ գնահատման դասընթացն* ունի գնահատման հետևյալ սխեման, որտեղ տրված են գնահատման առանձին բաղադրամասերի համար սահմանված հնարավոր առավելագույն միավորները (բոլոր բաղադրամասերը գնահատվում են ամբողջ միավորներով).

*Աղյուսակ 3.*

Գնահատման բաղադրամասը	$Գ_{մաս.}$	$U_{ընթ. 1}$	$U_{ընթ. 2}$	$U_{ընթ. 3}$	$U_{ընթ. 4}$	$Գ_{ար}$
Միավորը	4	4	4	4	4	20

Օրինակ, եթե ուսանողի մասնակցությունը դասընթացին գնահատվել է 2 միավոր, դասընթացի համար նախատեսված 4 ընթացիկ ստուգումներից նա վաստակել է համապատասխանաբար 3, 2, 3 և 4 միավորներ, ապա այդ դասընթացի արդյունաբար գնահատականը կլինի՝

$$Գ_{ար} = 2 + 3 + 2 + 3 + 4 = 14:$$

6. Դասընթացների գնահատման վերը նկարագրված եղանակները կիրառվում են միայն *մասնագիտական կրթամասի* բաղկացուցիչ դասընթացների (ուսումնական մոդուլների) գնահատման համար: *Հումանիտար ու սոցիալ-տնտեսագիտական և մաթեմատիկական ու բնագիտական կրթամասերի* բաղկացուցիչ դասընթացների գնահատումն իրականացվում է ավանդական եղանակով (ստուգարք կամ 20 միավորանոց սանդղակով գնահատվող եզրափակիչ քննություն): Պրակտիկաները գնահատվում են ստուգարքի ձևով:

7. Քննության գնահատականը հրապարակելու պահից ուսանողն իրավունք ունի այն գանգատարկելու գնահատումն իրականացրած դասախոսին կամ քննական հանձնաժողովին, իսկ վերջինիս հետ անհամաձայնության դեպ-

քում՝ երկօրյա ժամկետում դիմելու դասընթացը կազմակերպող ամբիոնի վարիչին, այնուհետև նաև ֆակուլտետի դեկանին:

### 5.3. Կիրարկման ընթացակարգը

1. Ընթացիկ և եզրափակիչ ստուգումների ենթակա ուսումնական նյութի բովանդակությունը, քննությունների ձևերը, հարցաշարերը և ժամանակացույցը, ինչպես նաև գնահատման մեթոդներն ու չափանիշներն ուսանողներին տրամադրվում են նախապես (կիսամյակի առաջին 2 շաբաթվա ընթացքում):
2. Ընթացիկ և եզրափակիչ քննությունների ժամանակացույցները կազմվում են ֆակուլտետների և հաստատվում ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի կողմից: Քննությունների հաստատված ժամանակացույցի մեկ օրինակը հանձնվում է ուսումնամեթոդական վարչություն:
3. Ընթացիկ քննություններն անց են կացվում ուսումնառության կիսամյակի 7-8-րդ և 15-16-րդ շաբաթներում (8-րդ կիսամյակում՝ 4-րդ և 8-րդ շաբաթներում): Ընթացիկ քննության օրը ուսանողն ազատվում է դասերից:
4. Ընթացիկ ստուգումներն անց են կացվում յուրաքանչյուր 4 շաբաթը մեկ (8-րդ կիսամյակում՝ յուրաքանչյուր 2 շաբաթը մեկ): Ընթացիկ ստուգումն անց է կացնում տվյալ առարկան դասավանդող դասախոսը՝ առարկայի՝ դասացուցակով հատկացված ժամերին (ուսանողը դասերից չի ազատվում):
5. Եզրափակիչ քննություններն անց են կացվում կիսամյակային քննաշրջաններում՝ 17-20-րդ շաբաթներում (8-րդ կիսամյակում՝ 9-10-րդ շաբաթներում):

### 5.4. Գնահատման սանդղակը և նշագրումը

1. ԱՄԿՀ-ում ուսանողի ուսումնառության արդյունքների գնահատման համար կիրառվում է գնահատականների 20 միավորանոց սանդղակը, որը ներկայացված է ստորև.

Աղյուսակ 4.

Միավորը	Գնահատականը
18-20	«Գերազանց»
13-17	«Լավ»
8-12	«Բավարար»
0-7	«Անբավարար»
0	«Չներկայացած»
-	«Ստուգված» «Չստուգված»

Ուսանողի ստուգարքային գրքույկում և դասընթացի քննական ամփոփագրում արդյունարար միավորի հետ մեկտեղ փակագծերում նշվում է նաև համապատասխան գնահատականը (օրինակ՝ 18 («գերագ.»)):

2. Դասընթացներից, որոնցից ուսանողը վաստակել է 8-ից ցածր արդյունարար միավոր կամ գնահատվել է «չստուգված», կրեդիտներ չեն տրվում: «Ստուգված» գնահատման դեպքում ուսանողի օգտին *վարկանիշային միավորներ* չեն գրանցվում, հետևապես այն չի ազդում ուսանողի *միջին որակական գնահատականի* վրա:

## **6. Ուսանողի ակադեմիական տեղեկագիրը**

1. Ուսանողի ուսումնական գործունեության արդյունքներն ու առաջադիմության ցուցանիշներն ուսման որոշակի ժամանակահատվածի կամ ողջ շրջանի ընթացքում վավերագրելու համար ԱՏԿՀ ֆակուլտետները յուրաքանչյուր ուսանողի համար, նրա ընդունման պահից սկսած, վարում են *ակադեմիական տեղեկագիր*<sup>4</sup>, որտեղ յուրաքանչյուր քննաշրջանից հետո գրանցվում են ուսանողի ուսումնասիրած դասընթացները և կրթական մոդուլները, վաստակած կրեդիտները և ստացած արդյունարար գնահատականներն ըստ կրթական մոդուլների և կիսամյակների: Տեղեկագիրն արտացոլում է ուսանողի կատարած ուսումնական աշխատանքի ծավալը և կրթական ձեռքբերումների որակը:
2. Ուսանողի վաստակած կրեդիտները վավերագրվում և կուտակվում են նրա ակադեմիական տեղեկագրում և մնում ուժի մեջ նրա ուսումնառության ողջ ընթացքում՝ անկախ ուսումնառության ընդհատումից կամ ուսումնական ծրագրի հետագա հնարավոր փոփոխություններից:
3. Ուսանողի ուսման առաջադիմության ընդհանրացված արդյունքները ներկայացնելու համար ակադեմիական տեղեկագրում կիսամյակային արդյունքներից հետո նշվում են տվյալ կիսամյակի և մինչև ուսման տվյալ ժամանակահատվածն ուսանողի առաջադիմությունն ամբողջացնող ամփոփիչ տվյալները, որոնք ներառում են հետևյալ 4 քանակական ցուցանիշները<sup>5</sup>
  - *գումարային կրեդիտների* քանակը,
  - *գնահատված կրեդիտների* քանակը,
  - *վարկանիշային միավորները*,
  - *միջին որակական գնահատականը*:
4. *Գումարային կրեդիտը (Կ)* կրթական ծրագրի ավարտական պահանջները բավարարելու նպատակով ուսանողի վաստակած կրեդիտների գումարն է:
5. *Գնահատված կրեդիտը (ԳԿ)* գումարային կրեդիտների այն մասն է, որը գնահատված է տարբերակված գնահատականներով:

<sup>4</sup> Ակադեմիական տեղեկագրի օրինակը կցված է սույն կարգին:

<sup>5</sup> Տե՛ս ակադեմիական տեղեկագրի կից օրինակը:

$$\mathbb{I} = \sum \hat{I}_i \text{ » } \mathbb{I} \quad i :$$

6. Վարկանիշային միավորը (ՎՄ) յուրաքանչյուր կրեդիտի համար ուսանողի ստացած գնահատականների գումարն է, որը հաշվարկվում է որպես առանձին դասընթացների (մոդուլների) գնահատված կրեդիտների և դրանց արդյունարար գնահատականների արտադրյալների գումար.

$$i\mathbb{I} = \sum \hat{I}_i \text{ » } \mathbb{I} \quad i \times \mathbb{I}_{\text{արդյունք}}$$

որտեղ  $\mathbb{I}_{\text{արդյունք}}$ -ը տվյալ ուսումնական մոդուլից ստացված արդյունարար գնահատականն է (օրինակ, եթե 5 կրեդիտանոց դասընթացը գնահատվել է 12, ապա տվյալ դասընթացից վարկանիշային միավորը հավասար է 5 կրեդիտ  $\times$  12 = 60` 100 հնարավորից):

7. Միջին որակական գնահատականը (ՄՈԳ) կրեդիտներով կշռված գնահատականների միջինն է, որը հաշվարկվում է վարկանիշային միավորները գնահատված կրեդիտների գումարի վրա բաժանելով (արդյունքը կլորացվում է 1/100-ի ճշտությամբ).

$$\mathbb{I} = \frac{i\mathbb{I}}{\mathbb{I}}$$

8. Հաշվառվում և ակադեմիական տեղեկագրում գրանցվում են *կիսամյակային* (հաշվարկված առանձին կիսամյակի համար) և *արդյունարար* (հաշվարկված ուսման տվյալ շրջանի համար) վարկանիշային միավորները և ՄՈԳ-երը:

## 7. Ուսման առաջադիմությունը

- Ըստ ուսման առաջադիմության` ուսանողները դասակարգվում են` *առաջադիմող, փորձաշրջանի կարգավիճակում* գտնվող և *հեռացման ենթակա* :
- Ուսանողը համարվում է *առաջադիմող*, եթե`
  - կիսամյակում ունի 30 կրեդիտ միջին ուսումնական բեռնվածություն (10% թույլատրելի շեղումով),
  - հավաքել է տվյալ կիսամյակի համար ուսումնական ծրագրով սահմանված բոլոր պարտադիր դասընթացների<sup>6</sup> կրեդիտները,
  - ապահովել է բակալավրի կրթական աստիճանում ուսանողի համար սահմանված կիսամյակային ՄՈԳ-ի 8,00 նվազագույն շեմը:
- Ուսանողը համարվում է *փորձաշրջանի կարգավիճակում*, եթե չի բավարարել նախորդ կետում նշված երեք պայմաններից որևէ մեկը:

<sup>6</sup> Տես դասընթացների ա) խումբը, բաժին 3, 3-րդ կետ:



4. Փորձաշրջանի կարգավիճակ ունեցող ուսանողին հնարավորություն է տրվում ուղղելու թերացումներն ու բացթողումները և բարձրացնելու ուսման առաջադիմությունը ծրագրի նվազագույն պահանջներին համապատասխան:
5. Բակալավրի կրթական ծրագրի համար փորձաշրջանի տևողությունը համընկնում է ակադեմիական պարտքերի մարման (լուծարքի) շրջանին:
6. Փորձաշրջանի կարգավիճակում գտնվող ուսանողը համարվում է հեռացման ենթակա, եթե սահմանված ժամկետում դուրս չի գալիս այդ կարգավիճակից:
7. Միևնույն կրթական ծրագրում ընդգրկված տարբեր ուսումնական բեռնվածություն ունեցող ուսանողների ակադեմիական առաջադիմությունները համեմատվում են (ուսանողական նպաստներ, պետական, ներքուհական և այլ տեսակի կրթաթոշակներ հատկացնելիս) նրանց *վարկանիշային միավորների* օգնությամբ:
8. Ուսանողի բացարձակ առաջադիմությունը չափվում է *միջին որակական գնահատականով*:

### **8. Դասընթացի վերահանձնումը և կրկնումը**

1. Դրական գնահատված դասընթացի քննության/ստուգման կրկնում (վերահանձնում) չի թույլատրվում:
2. Հարգելի պատճառներով բացակայության դեպքում բաց թողնված դասաժամերը հաշվի չեն առնվում դասընթացին ուսանողի մասնակցության աստիճանը որոշելիս, եթե այն հավաստող սահմանված կարգի բժշկական տեղեկանքը ներկայացվում է հաճախումները վերսկսելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում:
3. Քննությանը կամ ստուգմանը չներկայանալը համարվում է հարգելի միայն 2 աշխատանքային օրվա ընթացքում դեկանատում գրանցված սահմանված կարգի բժշկական տեղեկանքի կամ դիմումի առկայության դեպքում:
4. Հարգելի պատճառով ընթացիկ քննությանը կամ ստուգմանը չներկայացած ուսանողն այն կարող է վերահանձնել մինչև հաջորդ ընթացիկ քննությունը/ստուգումն ընկած ժամանակահատվածում՝ նախապես այն համաձայնեցնելով դեկանատի/ պարապոդ դասախոսի հետ:
5. Հարգելի պատճառներով եզրափակիչ քննությանը չներկայացած ուսանողը դեկանատի թույլտվությամբ քննաշրջանի ընթացքում կարող է վերահանձնել այն:
6. Եզրափակիչ քննությունից «անբավարար» գնահատական ստացած կամ անհարգելի պատճառներով դրան չմասնակցած ուսանողը ակադեմիական պարտքերի մարման (լուծարքի) շրջանում կարող է վերահանձնել այն, եթե տվյալ դասընթացից նրա արդյունարար գնահատականը ցածր է «բավարար» գնահատականից:
7. Սահմանված ժամկետներում ընթացիկ ստուգումներն անհարգելի պատճառով չհանձնած կամ արդյունարար նվազագույն 8 միավորը չհավաքած ուսանողներն

իրավունք ունեն դրանք լրացնելու և հանձնելու ակադեմիական պարտքերի մարման (լուծարքի) շրջանում, սակայն չեն կարող վաստակել ավելի, քան անցողիկ 8 միավորը:

8. Հաջողությամբ հանձնված դասընթացների կրեդիտները կուտակվում են ուսանողի ակադեմիական տեղեկագրում և մնում ուժի մեջ՝ անկախ կիսամյակում ցածր առաջադիմությամբ պայմանավորված ուսման ընդհատման հանգամանքից:
9. Կրեդիտների կուտակման գործառույթի շնորհիվ վերանում է տարբեր պատճառներով ուսումնառությունն ընդհատած և այն վերսկսող ուսանողի կողմից կիսամյակը ամբողջությամբ կրկնելու անհրաժեշտությունը:

### **9. Ծրագրի եզրափակիչ ատեստավորումը**

1. Ուսանողի կողմից ծրագրի ընդհանուր կրթական արդյունքներին համապատասխան կարողությունների և հմտությունների ձեռքբերումը հաստատվում է ավարտական աշխատանքի (նախագիծ, ատենախոսություն և այլն) կատարումով և պաշտպանությամբ և ծրագրի ավարտից հետո կազմակերպվող մասնագիտական ամփոփիչ քննությամբ, որը չի կրկնում կիսամյակային քննություններով հաստատված կրթական արդյունքների գնահատումները:
2. Ավարտական աշխատանքի թեման ընտրվում և հաստատվում է ավարտական ուստարվա առաջին 2 շաբաթների ընթացքում: Աշխատանքը կատարվում է ավարտական ուստարվա ընթացքում:
3. Ավարտական աշխատանքի պաշտպանության կազմակերպման համար հատկացվում են ուսումնառության վերջին 4 շաբաթները, որոնց ընթացքում նախատեսվում է.
  - ա) Աշխատանքի ներկայացումը մասնագիտացնող ուսումնական կառույցի (ամբիոնի) քննարկմանը: Աշխատանքի հետ ներկայացվում է գիտական դեկավարի կարծիքը, որը ներառում է կատարված աշխատանքի վերաբերյալ դրական եզրակացություն:
  - բ) Ավարտական աշխատանքի նախնական քննարկում մասնագիտացնող ամբիոնում՝ աշխատանքի հեղինակի մասնակցությամբ: Էական դիտողությունների առկայության դեպքում բակալավրի աստիճան հայցողը պարտավոր է երկշաբաթյա ժամկետում լրամշակել աշխատանքը և լրացուցիչ քննարկման ներկայացնել այն: Դրական եզրակացության դեպքում մասնագիտացնող ամբիոնի կողմից աշխատանքը երաշխավորվում է պաշտպանության:
  - գ) Մասնագիտացնող ուսումնական կառույցի (ամբիոնի) կողմից աշխատանքը գրախոսության ուղարկելու կազմակերպում:
  - դ) Ավարտական աշխատանքի պաշտպանություն պետական քննական հանձնաժողովի նիստում և բակալավրի աստիճանի շնորհում:
4. Ավարտական աշխատանքի պաշտպանության և մասնագիտական ամփոփիչ քննության գնահատումը կատարվում է աղյուսակ 4-ում ներկայացված 20 միավորանոց սանդղակով:

5. Ավարտական աշխատանքի գնահատման ընդհանուր որակական չափանիշների համար սահմանված են գնահատման միավորների հետևյալ չափաքանակները.

Աղյուսակ 5.

Թիվ	Չափանիշ	Առավելագույն միավորը
1	Ներկայացման որակը	6
2	Ձևակերպման որակը	6
3	Կատարման ինքնուրույնության աստիճանը	6
4	Արդիականությունը/նորույթը	2
	<b>Ընդամենը`</b>	<b>20</b>

### 10. Կրեդիտների փոխանցումը

- Այլ բուհերից ԱՏԿՀ բակալավրի կրթական ծրագիր կրեդիտները փոխանցելի են առանձին դասընթացների, դասընթացների խմբի կամ ուսումնառության որոշակի շրջանների տեսքով: Փոխանցումը կատարվում է ուսանողի հայտի հիման վրա` երկու բուհերի փոխադարձ համաձայնությամբ` ECTS կրեդիտների փոխանցման կանոնների պահպանմամբ:
- Այլ ուսումնական ծրագրից ԱՏԿՀ բակալավրի ուսումնական ծրագիր կրեդիտներ կարող են փոխանցվել, եթե`
  - դրանց բովանդակությունները միանման են,
  - կան բովանդակային ոչ էական տարբերություններ,
  - առկա են բովանդակային տարբերություններ, սակայն վերջնական կրթական արդյունքները համարժեք են:
- Այլ բուհում ԱՏԿՀ ուսանողի ուսումնառության որոշակի շրջանի (կիսամյակ, ուստարի) անցկացման դեպքում այդ ժամանակահատվածի ուսումնառության ծրագիրը դառնում է եռակողմ համաձայնագրի առարկա` ուսանողի, ԱՏԿՀ-ի և ընդունող/հյուրընկալող բուհի միջև:
- Կրեդիտների փոխանցման և ուսանողների միջբուհական փոխանակման գործընթացների կազմակերպման համար Համալսարանն ունի *ECTS-ի բուհական համակարգող*:

### 11. Ուսումնական խորհրդատուների ծառայությունը

- Կրեդիտային համակարգով սովորող ուսանողներին ուսման գործընթացում օժանդակելու նպատակով ֆակուլտետը կազմակերպում է ուսումնական խորհրդատուների (կուրատորների) ծառայություն, որում ընդգրկում են մասնագիտության ուսումնական ծրագրերին քաջատեղյակ մասնագետներ:
- Ուսումնական խորհրդատուն իրականացնում է խորհրդատվական ծառայություններ մեկ կամ մի քանի հարակից մասնագիտությունների գծով և հսկում

իրեն կցված ուսանողների ուսումնական առաջընթացը՝ առաջինից մինչև ավարտական կուրս:

3. Խորհրդատուն ներկայացնում է ուսանողների ուսումնական շահերը, ուսումնական գործընթացի հետ կապված տարաբնույթ հարցերի շուրջ նրանց համար պարբերաբար կազմակերպում խմբային և անհատական խորհրդատվություններ:

## **12. Ուսանողի իրավունքներն ու պարտականությունները**

1. Ուսանողը պարտավոր է՝

- ծանոթանալ կրեդիտային համակարգով ուսուցման սույն կարգին և խստորեն հետևել դրա պահանջներին,

- կատարել ուսումնական դասընթացների և քննությունների համար սահմանված պահանջները,

- կանոնավոր հաճախել իր ուսումնառության ծրագրում ընդգրկված բոլոր դասընթացներին:

2. Ուսանողն իրավունք ունի՝

- ընտրելու տվյալ մասնագիտության ուսուցման համար համալսարանի կողմից առաջադրվող կամընտրական դասընթացներ՝ ուսումնական ծրագրի պահանջներին համապատասխան,

- միջբուհական փոխանակման և/կամ ակադեմիական շարժունության ծրագրերի շրջանակներում ուսումնառության որոշակի շրջան ուսումնառելու այլ բուհում,

- փոխադրվելու մեկ այլ բուհ համաձայն ՀՀ կառավարության սահմանված կարգի,

- ցանկացած կրթական աստիճանում ընդհատելու կամ շարունակելու ուսումնառությունը ԱՏԿՀ-ում, համաձայն գործող կարգի,

- հիմնավորված կերպով դիմելու և ստանալու իր ակադեմիական տեղեկագիրը՝ ավարտված ուսումնառության կամ ուսումնական ծրագրի չավարտված մասի համար,

- բակալավրի աստիճանը և համապատասխան որակավորումը հաստատող պաշտոնական փաստաթղթի հետ միասին անվճար ստանալու համաեվրոպական նմուշի դիպլոմի հավելված հայերեն և անգլերեն լեզուներով՝ համաձայն ՀՀ Կառավարության համապատասխան որոշման:

### **Ավարտական պահանջներ**

1. Բակալավրի որակավորման աստիճան ստանալու համար ԱՏԿՀ-ի ուսանողը պետք է հաջողությամբ լրացնի 240 կրեդիտ ուսումնական բեռնվածություն (ներառյալ կուրսային աշխատանքներ և պրակտիկաներ), որոնց համար հաշվարկված հանրագումարային միջին որակական գնահատականը պետք է կազմի առնվազն 8,00 ներառյալ 4 կրեդիտ արժեքով մասնագիտական ամփոփիչ քննությունը և 12 կրեդիտ արժեքով ավարտական աշխատանքը:

2. Բոլոր ուսանողները, մասնագիտությունից անկախ, պետք է կուտակեն 36 կրեդիտ հումանիտար և սոցիալ- տնտեսագիտական դասընթացների կրթամասից (այդ թվում 4 կրեդիտ կամընտրական դասընթացների առաջարկվող ցանկից), 10 կրեդիտ՝ մաթեմատիկական և բնագիտական դասընթացների կրթամասից

(ներառյալ 2 կրեդիտ կամընտրական դասընթացների ցանկից) և առնվազն 20 կրեդիտ՝ պրակտիկայից և եզրափակիչ ատեստավորման ձևերից:

3. Մնացած 174 կրեդիտների բովանդակային կազմը սահմանվում է՝ ելնելով տվյալ մասնագիտությամբ բակալավրի պատրաստման ծրագրի ելքային կրթական արդյունքներով սահմանված մասնագիտական կարողությունների և հմտությունների ձեռքբերման պայմանից, և յուրաքանչյուր մասնագիտության համար տրվում է առանձին (ընդ որում, մինչև 24 կրեդիտ կարող է հատկացվել տվյալ մասնագիտության շրջանակներում որոշակի ուղղություններով մասնագիտացում իրականացնելու համար):

**13. 21 Ի Ծ ձեռնարկ 3 Ի 3 Կ 08 3 ձեռնարկ**

2008 – 2009 ձեռնարկ 3 Ի 3 Կ 3 ձեռնարկ

2 Կ 3 Կ 3 Կ 3 Կ 3 ձեռնարկ

01 ձեռնարկ «Ա» ձեռնարկ 2008 Ա. – 23 Նոյեմբեր 3 ձեռնարկ 2009 Ա.	
ձեռնարկ 3 Կ 3 Կ 3 ձեռնարկ	01 ձեռնարկ «Ա» ձեռնարկ
1 - Կ 3 Կ 3 Կ 3 Կ 3 ձեռնարկ	22 – 26 ձեռնարկ «Ա» ձեռնարկ
1 - Կ 3 Կ 3 Կ 3 Կ 3 ձեռնարկ	13 – 24 Նոյեմբեր 3 ձեռնարկ
2 - ձեռնարկ 3 Կ 3 Կ 3 ձեռնարկ	20 – 24 Նոյեմբեր 3 ձեռնարկ
3 - ձեռնարկ 3 Կ 3 Կ 3 ձեռնարկ	17 – 21 Կ 3 ձեռնարկ
2 - ձեռնարկ 3 Կ 3 Կ 3 ձեռնարկ	08 – 19 1 ձեռնարկ «Ա» ձեռնարկ
4 - ձեռնարկ 3 Կ 3 Կ 3 ձեռնարկ	22 – 26 1 ձեռնարկ «Ա» ձեռնարկ
1 ձեռնարկ 3 Կ 3 Կ 3 ձեռնարկ ձեռնարկ 3 Կ 3 ձեռնարկ	22 – 26 1 ձեռնարկ «Ա» ձեռնարկ
ձեռնարկ 3 Կ 3 ձեռնարկ	26 1 ձեռնարկ «Ա» ձեռնարկ
Կ 3 Կ 3 Կ 3 ձեռնարկ	29 – 31 1 ձեռնարկ «Ա» ձեռնարկ - 23 Նոյեմբեր 3 ձեռնարկ
ՕՍ՝ Կ 3 Կ 3 ձեռնարկ 3 ձեռնարկ	28 Նոյեմբեր 3 ձեռնարկ – 08 Կ 3 ձեռնարկ 3 ձեռնարկ

**Կ 3 Կ 3 Կ 3 Կ 3 ձեռնարկ**

09 Կ 3 ձեռնարկ 3 ձեռնարկ 2009 Ա. – 26 Նոյեմբեր 3 ձեռնարկ 2009 Ա.	
ձեռնարկ 3 Կ 3 Կ 3 ձեռնարկ	09 Կ 3 ձեռնարկ 3 ձեռնարկ
1 - Կ 3 Կ 3 Կ 3 ձեռնարկ	02 – 06 Կ 3 ձեռնարկ 3 ձեռնարկ
1 - Կ 3 Կ 3 Կ 3 ձեռնարկ	23 Կ 3 ձեռնարկ 3 ձեռնարկ – 03 3 ձեռնարկ
2 - ձեռնարկ 3 Կ 3 Կ 3 ձեռնարկ	30 Կ 3 ձեռնարկ 3 ձեռնարկ – 03 3 ձեռնարկ
3 - ձեռնարկ 3 Կ 3 Կ 3 ձեռնարկ	27 3 ձեռնարկ – 04 Կ 3 ձեռնարկ
2 - ձեռնարկ 3 Կ 3 Կ 3 ձեռնարկ	18 – 29 Կ 3 ձեռնարկ
4 - ձեռնարկ 3 Կ 3 Կ 3 ձեռնարկ	01 – 05 Նոյեմբեր 3 ձեռնարկ
1 ձեռնարկ 3 Կ 3 Կ 3 ձեռնարկ ձեռնարկ 3 Կ 3 ձեռնարկ	01 - 05 Նոյեմբեր 3 ձեռնարկ
ձեռնարկ 3 Կ 3 ձեռնարկ	05 Նոյեմբեր 3 ձեռնարկ
Կ 3 Կ 3 Կ 3 ձեռնարկ	08 - 26 Նոյեմբեր 3 ձեռնարկ
2 Կ 3 Կ 3 Կ 3 ձեռնարկ 3 Կ 3 ձեռնարկ 3 ձեռնարկ 3 Կ 3 Կ 3 ձեռնարկ	27 3 ձեռնարկ – 30 Կ 3 ձեռնարկ
2 Կ 3 Կ 3 Կ 3 ձեռնարկ 3 ձեռնարկ	01 Նոյեմբեր 3 ձեռնարկ – 31 Կ 3 ձեռնարկ

#### **14. Եզրափակիչ դրույթներ**

Սույն կարգը գործողության մեջ է դրվում 2008/09 ուսումնական տարում ԱՏԿՀ քակալավրի կրթական ծրագրերում ընդգրկված 1-ին կուրսի ուսանողների ուսումնառությունը կազմակերպելու համար: